




### ■ Ծանր կռիւներ



Ատրպէյճանական զօրամիաւորումները կը շարունակեն իրենց յարձակումներն ու ումբակոծումները զարաբաղեան բանակի դիրքերու ուղղութեամբ: Նախապատրաստական ումբակոծումներէ ետք թշնամին փորձած է յառաջանալ Թալիշէն հարաւ գտնուող դիրքերու ուղղութեամբ: Բռնկած դաժան կռիւներու ընթացքին զարաբաղեան ուժերը յաջողած են ետ մղել բոլոր յարձակումները: Կողմերը երկուստեք կորուստներ տուած են: Հայկական կողմէն կայ 5 զոհ եւ 7 վիրաւոր: Ատրպէյճանական կողմէ սպանուած են 47 հոգի, ինչպէս նաեւ փճացած է հրասայլ մը:

Ատրպէյճանական բանակը յարձակում գործած է նաեւ Ասկերանի ուղղութեամբ, սակայն մեծ կորուստներ կրած է ականապատուած դաշտերուն մէջ: Զոհ գացած են 57 ազերիներ:



### ■ Պատերազմը Աւելի Կը Շիկանայ

Հակամարտութեան խաղաղ կարգաւորման ուղղութեամբ քաղաքական բոլոր հանդիպումներու արդիւնքները կը մնան «ձայն բարբառոյ յանապատի», քանի որ ատրպէյճանական կառավարութիւնը այլեւս մտադիր չէ խաղաղութիւն հաստատելու:

Աշխապատէն վերադառնալէ ետք հեռատեսիլի տուած հարցազրոյցի ընթացքի Հայտար Ալիեւ անգամ մը եւս անվարան կերպով շեշտեց, որ իրենք ուժի դիրքերէ պիտի լուծեն հարցը: Ատոր գործնական քայլը պատերազմի հերթական շղթայազերծումն է զարաբաղեան ռազմաճակատներուն վրայ:

Արցախեան բանակի մամլոյ գրասենեակէն կը տեղեկացնեն, որ ատրպէյճանական ստորաբաժանումները զանազան տեսակի զէնքերով կը շարունակեն յարձակումները հայկական դիրքերու վրայ:

Թշնամին չի դադրեցներ իր յարձակումները Մարտակերտի, Ասկերանի եւ Մարտունիի ուղղութեամբ: Տալով մեծ թիւով զոհեր եւ կորուստներ, ազերիները կ'ուզէին ճեղքել զարաբաղեան պաշտպանութիւնը այս երեք ուղղութիւններով: Անգիջող կռիւներու ընթացքին երկու կողմէն ինկած են զոհեր եւ վիրաւորներ:

Ըստ զարաբաղեան բանակի հետախուզութեան տուեալներուն, ատրպէյճանական բանակի յարձակման առաջին գիծին վրայ յատուկ ջոկատներ կը գտնուին, որոնք տեղւոյն վրայ կը գնդակահարեն նահանջող զինուորները: Ռազմաճակատի ամբողջ երկայնքին վարձկան զինուորներու ջոկատներ են որ կը կռուին, գլխաւորաբար աֆղան մուճահեդներ:

Կռիւները կը շարունակուին վերոյիշեալ ուղղութիւններով: